

դարեր և ճշմարիտ հաւատացովների համար է, որոնք նորա մէջ հոգեոր փրկութիւն են խնդրում, վերածնւում լուսաւորւում և երջանկութիւն դանում:

Երբ կ. Պոլսի «Օրագիր» թերթն ամուսնական խնդիրներ յարուցանելով՝ այս սկզբանց գեմ տղիտաբար զառանցումէր, «Աթօն» ամսագիրը շեշտումէր. (1873, էջ. 115). «Օրագիր» տպիտութեան, չասեմք զայթակղութեան, խիստ ցաւալի օրինակ կրնծայէ զրական աշխարհին, երբ ամուսնական կենաց շրջանին մէջ պատահած զեղծումներն Եկեղեցւոյն կվերագրէ և կկարծէ թէ՝ սոյն զեղծումներն խսպառ կանչետին, երբ ամուսնական օրէնքներ խմբագրումն և Աղջոյին ժողովոյն ինքանուն-նեան ք չի և Եկեղեցու Համարական ժողովուն ժողովուն, ապա նույն անցնելու վերջը՝ Գեղագուստ Խաղողիսուն ու ըստ մինչ ինչ է կատարուած: Օրէնքներ խմբագրելն և մանաւանդ վաւերացնելն խիստ զիւրին գործէ, բայց օրինաց խմբագրութիւնն ամեննելն ապահով երաշխաւորութիւն չէ ամուսնական կենաց բարւոքման: Ուրեմն ամուսնական կենաց ճշմարիտ բարւոքման արմատն ոչ թէ օրինաց խմբագրութեան, այլ դաստիարակութեան և կրթութեան մէջ որոնելու է, և այն Աւետարանի դաստիարակութեան, Եկեղեցւոյ քրիստոնեական կենարար սկզբանց կրթութեան, և ոչ թէ այժմեան դպրոցաց մէջ աւանդուած երեւթական և աշքակապ կրթութեան մէջ, որ քրիստոնեական դաստիարակութեան հակապատկերն է ամենայն մասամբ և հետեւապէս անկրթութիւն՝ քան թէ կրթութիւն «Օրագիր», եթէ ժամանակի յառաջադիմութեան հետ ընթացած լիներ և իմանար, որ ամուսնական նոր օրէնքներ հաստատող ազգերն խիլ իրենց օրէնքներէն յուսահատելով՝ սկըսած են ընտանեկան և ընկերական կենաց բարւոքման համար բազմահատոր հրահանգիչ մատեաններ հրատարակել և ամեն եղծմանց, ամեն հիւանդութեանց միակ դարմանն ճշմարիտ դաստիարակութիւնն հռչակել: «Օրագիր» անշուշտ լուսաւոր աշխարհի ընտիր խորհրդածութիւններն կջանար քաղուածել և իւր

ազգին հազրողել, քան թէ Եկեղեցւոյ դէմ զինիլ ու ամուսնական նոր օրէնսդրութեան խնդիր յարուցանել և անհմուտ բժշկի նման այնպիսի գեղ առաջարկել որ աւելի մահացուցիչ է քան թէ կենդանացուցիչ:

....Եկեղեցին, եթէ ամուսնութեան նկատմամբ բազմաթիւ օրէնքներ չէ սահմանած, իւր միակ նպատակն եղած է սիրոյ սոյն միտկ օրէնքն թագաւորեցնելու որ լրումն է ամենայն օրինաց և մարգարելից: Եկեղեցւոյ բռնած ընթացքն խիստ օրինաւոր է և անմոլար: Ուստի եթէ նոր օրինաց խմբագրութեան սիրահարներն շատ զմայլին իրենց օրէնքներով և համարձակին Եկեղեցւոյ անուամբ Եկեղեցւոյ մէջ մուծանել, կարծեւմ թէ Եկեղեցին կատիպուի ասել այդ օրինականներուն—«Ձեր նոր օրէնքներով ձեր քաղաքական օրինապահութեամբ, մի մտնէք իմ ծոցս, վասն զի ես անօրէն չեմ; ես Օրինագիրք ունիմ այն է ԱԽԵՏԸՆՈՒՆ փոխանակ նոր օրէնքներ խմբագրելու, իմ օրէնքներս ուսել և այն շատ է ձեզ»:

Այս բաւ է. «Ամենայն ինչ սուրբ է սրբոց, բայց պղծոցն և անհաւատից ոչինչ է, սուրբ, այլ պղծեալ միտք և խորհուրդք նոցա: Խոստանան դիտել զԱստուած, և գործովք իւրեանց ուրանան....»:

(Կը շարունակուի)

Ա. Տէր. ՄԻՔԵԼԵՍԻՆ



ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԻ ՏԻՍԻՐ ՊԱՏԿԵՐ

ՀԹՈՎ. ՄԻԱՄԻԱՆԱՆ ՀԱՅՈՅ ԿԵԱՆՔԻՆ

Ք. ԶՄԻՇԻՄԻՆԻ



առմութիւնն կաւանդէ, թէ Հռովմէադաւանութիւնն կամ Պապականութիւնն այն օրէն Հայոց քրիստոնեական անդորրութիւնն վրդովիլ է և կրօնափոխութեան ժանտախտն արածել, երբ Ունիթուններն մուտ գտած են ի Հայաստան:

Արք Արարատեան աշխարհէն և Արևեաց երկրէն Հայք սկսած են գաղթել ինչպէս զանազան երկիրներ, նոյնպէս և ի Փոքր Ասիա, որնք վերջին գաղթականաց մէջ եղած են նաև Ջահկեցիներ, Ունիթոռաց խմբով խմբուած, որոնք գաղթելով իրենց հայրենիքէն բնակութիւն հաստատած են ի Զմիւռնիա: Առաջինք իրենց հետ քահանայք ևս ունեցած են, բայց ի սկզբան առանձին Պապադաւան եկեղեցի չեն կազմած և իրենցմէ շատերն լատինական եկեղեցին յաճախելով հանդերձ՝ իրենց կրօնական ծիսակատարութիւններն Զմիւռնիոյ բուն Հայոց եկեղեցւոյն մէջ կատարած են, ինչպէս են Մհրաբ-Ռին, Պատի, Թաղում և այլն: Յետ ժամանակաց Գաղատիայէն ևս հռովմէադաւան հայեր գալով միացած են Ջահկեցիներու հետ և կազմած են շուրջ 300 ընտանիք:

Առաջ տակաւ առ տակաւ ընտելանալով լատինական ծէսերուն, հետզհետէ գագրեցուցած են Հայ եկեղեցականաց ձեռքով կատարուած ծիսակատարութիւններն: Տակաւին կան ծերունիք, որոնք տեսած են Ջահկեցիներն և Գաղատացիներն իրենց տեղական հազուսով: Կան նաև լատինահայ ծերունիք և պառաւունք, որոնք Հայոց Եկեղեցւոյ մէջ միրտուած են, բայց այսօր այդ 300 տուն գաղթական Հայոց սերունդներն այնպէս փոփոխուած են թէ: անունով, թէ սրտով, թէ գաւանութեամբ, որ աւելի կը սիրեն Լատին կամ Ֆրէնի անուննիլ և ոչ երբէք Հայ:

Սոյն փոփոխութիւնն կամ ազգուրացութեան երևոյթն շատ տարօրինակ է պատմութեան մէջ: Արգարե՝ Հայք հեռաւոր երկիրներ գաղթելով և միմիայն օտարէն շրջապատուած և հրապուրուած լինելով՝ գաւանափոխութեան առթիւ կորուսած են նաև իրենց Ազգութիւնն, ինչպէս ի Եհաստան և այն: Բայց շատ տեղ ևս գաւանափոխութեամբ հանդերձ չեն ուրացած իրենց ազգութիւնն, թէ և ժամանակն այն ևս մոռացնել պիտի տայ, եթէ ուշադրութիւն չը գարձուի, ինչպէս ի Հունդարիա և այլն:

Սակայն ի Զմիւռնիա լատինադաւան Հայ գաղթականութեան հանդէպ գանուուած է, նաև բուն Հայ հասարակութիւն, իւր եկեղեցիներով և եկեղեցականներով և այսպիսի մի փոքր քաղաքի և մերձաւոր յարաբերութեան մէջ՝ 300 տուն գաղթականութիւնն, գաւանափոխութեան առթիւ, իսպառ ուրացած է իւր ազգութիւնն:

Այն տարօրինակ երեսոյթին տարբեր պատճառներ կը տրուին. ոմանք կը վերագրեն զայն երկու կողմանց մէջ ձարակուած ատելութեան և ոմանք ֆրանսական քաղաքականութեան, որով իրր թէ գաւանափոխիներն պաշտպանութիւն գտնելով՝ աւելի յարած են լատինականութեան. թերևս այն առարկութիւնն իսկ հաւանականութենէ զուրկ չը լինին. բայց առաւել հաւանականն այն է, որ Հայ եկեղեցականք անտարբեր գտնուած են, իսկ լատինական կղերն յարատւած է իւր ջանից մէջ, գաւանափոխ Հայերն խորշեցնելով՝ ոչ միայն իրենց Ազգային Եկեղեցին, այլև իրենց ազգութենէն: Այս բանին ապացոյց է այն իրողութիւնն, որ գաւանափոխք ոչ միայն իրենց անունն փոխած են. այլ նաև մականունն, տոհմանունն. և եթէ հարկ լինի տոհմալին փիճաբանութեան մէջ մտնել իրենց հետ կան այն պիտիներ, որոնք աւելի կը սիրեն ասել թէ, իրենք սերած են Աճենաշուշ (Պարսիկներէ) քան թէ Հայերէ: Այս է ի հնումն գաղթողաց վիճակն ի Զմիւռնիա:

Տարիներ առաջ Զմիւռնիոյ Մխիթարեան Պիարանք փափաքեցան առանձին Հայ—Հասարակութիւն կազմել և իրենց մէջն, Առևկաս Տէրտէրեան վարդապետն փոխ առաջնորդ կարգուեցաւ Պօլսոյ Գերապայշտականի աշխատութեամբ և Տէրութեան հրովարտակաւ: Սակայն Տէրտէրեան հայութեան շնորհական տեղուն լատին եպիսկոպոսն և արքեպիսկոպութիւն ունենալու: Խընդիրն ծանրացաւ և Վատիկանի ու Պօլսոյ Պապական փոխանորդարանի և հռովմէադաւան Հայոց մէջ բանակցութեան նիւթ եղաւ: Պուկաս վարդապետ Տէրտէրեան պարտաւո-

ըեցաւ զոջման թղուակնեաւ լատին եպիսկոպոսի ներսպութիւնն խնդրել և յետոյ Մասնաժողով կազմուեցաւ ի Զմիւռնիատ լատին եպիսկոպոսի նախագահութեամբ։ Հրատիրուեցան բոլոր տաճկահպատակ հոռվիմէադաւան-ներն որոշելու համար թէ ոյք են, որովք կուղեն ըստ մարմնաւորին Պուկաս փարգապետի առաջնորդութեան հպատակել, քանզի ըստ հոգեորին արդէն ամենքն լատին եպիսկոպոսի իրաւասութեան ներքոյ են:

Մասնաժողովի արգիւնքն շատ աննպաստ եղաւ. Միսիթարեան Միարանից, քանզի հազիւթէ քանի մի ընտանիքներ և մասնաւոր փաճառականներ (վերջին ժամանակներս հալեպէն, Գաղատիայէն և այլ տեղերէ գաղթած) յօժարեցան Տէրտէրեանի առաջնորդութեամբ կարգաւորել կառավարութեան հետ ունեցած խնդիրներն, իսկ մնացեալ քանի մի հարիւր տուն նախկին դաղթականներն մնացին վերստին լատին եպիսկոպոսի իրաւասութեան ներքոյ. որ իւր կողմէն տաճկահպատակ աշխարհական ուն փոխանորդ կարգելով՝ նորա ձեռքով կը կարգադրէ կառավարական խնդիրներն ինչպէս են Զմիւռնիոյ Ա. Պողիկարպոս եկեղեցին ժամանակին շինած են Հայ գաղթականք և ապա նոյն եկեղեցւոյն տիրած են լատինք, չնշած են պատկերներու վրայէն հայերէն զրելն, թէև տակաւին եկեղեցւոյ մօտ կը դանուին Հայ զրերով զերեզմաններ: Ա սկզբան Հոռվիմէական քահանայք Հայ լեզուաւ պատարագած են, բայց յետ ժամանակաց՝ արտաքսած են Հայերէնն և այժմ այն իսկ Միսիթարեան Միարանք մասնաւոր եկեղեցի չունին, այլ ժամերգութիւն կը կատարէն իրենց գալուցին կից՝ մատրան մէջ:

Հ Ա Բ Ի Ւ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՈԽԾՈՒՄՆԵՍԻՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

Շ Ա Բ Ա Կ Ա Ն



Չնչ անուն էր կրում ի հընում՝ գերազանց կերպով Աստուծոյ անսահման մեծութեան և մարդուս փոքրիկութեան վերայ ճառող այն գեղեցիկ մատեանը, որին այժմ կոչում ենք Շալահան: կամ ի նչ անուններ ունեին ի հնում՝ Աստուծոյ անկշանելի բարերարութիւնը, Հայ եկեղեցւոյ աստուածպաշտութեան խորին խորհուրդները և վիտութիւնները և մարդուս հոգեորդ բաղձանքները իրենց մէջ ամփափող այն սրաւառուչ երգերը որոց այժմ դարձեալ անուանում ենք Շալահան: Վիով բանիւ եղբ նոքա աշխարհ եկան և եկեղեցւոյ գիրին ընկան, ի՞նչ անուններ ունեին: Վհա ուշադրութեան արժանի մի հարց, որը զանազան դարերի կարգով ստուգուում և լուծուումէ այսպէս:

Հինգերորդ դարում երբ պարսից Յաղիերտ թագաւորի հրովարտակի համաձայն զանազան քրիստոնեայ ազգերի զիմաստներ իրենց կրտրիծ այրուձիով Պարսկաստանում խմբւումն Յաղիերտի արքունիքի առաջ և առաջին անգամ այնտեղ միայն լսում հաւատափոխութեան այս գմնդակ լուրը Յաղիերտի բերանից, որ յոխորտարով ասում է, նա իւր չարասէր խորհրդապահներին, — « Հարցէք, քննեցէք, տեսէք, թող որ լաւն է, ընտրեալ կայցուք»¹⁾. ուստի այդ քրիստոնեայ ամբոխը Յաղիերտին մի կերպով յուշ առնելու, հասկացնելու համար, թէ, հաւատի ընտրութեան մասին

1) Եղիշէ երկրորդ Յեղանակ: 2) Նոյն:

